

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ

ԵԿԵՂԵՏԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

✱ Եր. 1 Յուն.— Ս. Արգարու քաղաւորին մե-
րոյ: Ս. Պատարազը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց
Մայր Տաճարին Ս. Դիտադրի մատուոյն մէջ: Ժամա-
րարն էր Հոգւ: Տ. Սիփան Արդ. Միսեան:

✱ Կիր. 2 Յուն.— Ս. Պատարազը մատուցուեցաւ
ի Ս. Հրեշտակապետ: Ժամարարն էր Հոգւ: Տ. Վիգէն
Արդ. Այբապետ:

✱ Դշ. 5 Յուն.— Ամեն. Պատրիարք Ս. Հայրը նա-
խագահեց շքեղօրէն զարդարուած Մայր Տաճարին մէջ
պաշտուած ժամերգութեան և նախատեսակին: Ապա,
«Օրհնեցէ՛ք զՏէր» Ս. Աթոռի շարականի երգեցողու-
թեամբ, Միարանութիւնը բարձրացաւ Պատրիարքա-
րան:

✱ Եշ. 6 Յուն.— Ս. Դարի Մարգարէին և Յա-
կոբայ Տեսանեղոսը Առաքելոյն: (Տօմ Առաքելական, ա-
ռաւորական ժամերգութեան ընթացքին, Ամեն. Պատ-
րիարք Ս. Հայրը զգեստաւորեալ բարձրացաւ Տեսանե-
ղոսը Աթոռի պատանդանդանին, որ մնաց մինչև ժա-
մերգութեան աւարտը: Լուսարաքապետ Գերշ. Տ.
Հայրիկ Արք. Այսնեան «Բրիտանոս Առաւոր» մերձ
մաղթանքի ընթացքին, ժամնաւոր մաղթանքներ քու-
թեանեղոսը Աթոռի ներկայ արժանաւոր Գահակալին
կենաց և արևելատեան համար: Նոյնը քուս պա-
տարազիչ Գերշ. Տ. Շահէ Եղս. Անճմեան, իր բարո-
ւի ընթացքին: Գերշ. Սրբազանը անդրադարձաւ այս
Աթոռի կենսքին և անոր կատարած նուաճումնե-
րուն՝ ժամնաւորարար: Ն. Ամեն. Տ. Եղիշէ Պատրիարք
Ս. Հօր դահակալութենէն ի վեր: Ապա, Ամեն. Պատ-
րիարք Ս. Հօր նախագահութեամբ կատարուեցաւ հո-
ղենացական հանդիսաւոր պաշտօն՝ Ս. Աթոռի
հանդիսեղանի պատկարներէն: Հոգիներուն համար:

✱ Ուր. 7 Յուն.— Ս. Ստեփանոսի հանդիսաւոր
նախատեսակին ի Ս. Յակոբ նախագահեց Ամեն. Պատ-
րիարք Ս. Հայրը: Տօնին բուրժառակի վարդապետ-
ներէն էին Հոգւ: Տ. Վիգէն Արդ. Այբապետ և Հոգւ:
Տ. Կաթակ Արդ. Պարտաւան:

✱ Եր. 8 Յուն.— Ս. Ստեփանոսի նախատեսակի-
ւազմին և առաջին մարտիրոսին: Ս. Աթոռի յորս
սարկաւազները և նախորդ երկոյ ժամերգութեան
ընթացքին Ամեն. Պատրիարք Ս. Հօրմէ ուրբտ ստա-
ցած ժառանգ. Վարժարանի բարձրագոյն դատարանի
առաւորները, առաջնորդութեամբ բուրժառակի
երկու Հոգեւորական Հայրերուն, պանծացուցին յիշա-
տակի իրենց մատարարին, առաւորական ժամերգու-
թեան վերջին մասին, որուն նախագահեց Նորին Ամե-
նապատուութիւնը: Ապա մատուցուեցաւ Ս. Պատա-
րազ Մայր Տաճարի աւանդատան՝ Ս. Ստեփանոս մա-
տառին մէջ: Ժամարարն էր Հոգւ: Տ. Մուշեղ Արդ.
Թաւանան:

✱ Կիր. 9 Յուն.— Ս. Պատարազը մատուցուեցաւ
ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցիին մէջ:
Ժամարարն էր Հոգւ: Տ. Մաշտոց Արդ. Բարխու-
դան:

— Դիտադր Առաքելապետը՝ Պետրոսի և Պե-
դրոսի հանդիսաւոր նախատեսակի պաշտուեցաւ Մայր
Տաճարին մէջ, նախագահութեամբ Գերշ. Տ. Նօբայր
Եղս. Պողոսեան:

✱ Բշ. 10 Յուն.— Ս. Առաքելոյն՝ Պետրոսի և
Պողոսի: Ս. Պատարազը մատուցուեցաւ Մայր Տաճա-
րի Ս. Պետրոսի վերնամատուոյն մէջ: Ժամարարն
էր Հոգւ: Տ. Գեղարդ Վրդ. Նաղարեան:

— Կէտիկ ետք ժամը 2:30ին, Ամեն. Պատրիարք
Ս. Հայրը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յակոբ-
եանց Մայր Տաճար, ուր նախագահեց Որդւոց Որոտ-

ման տօնի մեծահանգիստ նախատեսակին: Ապա, տօնին
շարականը՝ «Որ էն յիսթեան» երգելով Միարանու-
թիւնը բարձրացաւ Պատրիարքարան:

✱ Դշ. 11 Յուն.— Տօմ Ս. Արդեցն Որոտման՝
Յակոբայ Առաքելոյն և Յովհաննու Աւետարանչին:
Բարեկենդան Ս. Մննդեան Պանոց: Ամեն. Պատրիարք
Ս. Հայրը մատուց զորան հանդիսաւոր Ս. Պատարա-
զը Ս. Դիտադրի մատուոյն մէջ: Ապա, աւագնականի
հերթի և Ս. Կաթակալի մատուին ի մեծին, նա-
խագահեց Մայր Տաճարին մէջ կատարուած երբա-
րաժ մեծահանգիստ թափօրին: Յետոյ, «Օրհնեցէ՛ք
զՏէր» շարականի երգելով, Միարանութիւն և ժողո-
ւորը բարձրացան Պատրիարքարան, ուր Նորին Ա-
մենապատուութիւնը Ս. Պատարազի նշխար բաժնեց
բոլորին: Այսպիսով վերջացաւ շաբթը Ս. Մննդը
կանխող աւագ տօներուն:

✱ Ուր. 14 Յուն.— Նոր Տարի քստ իմն տօմարի:
Ս. Պատարազը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ
Սեղանին վրայ: Ժամարարն էր Հրաշափառն արժա-
կալով Ս. Աթոռ ժամանած Ս. Ուրախ միարան
Հոգւ: Տ. Ազան Վրդ. Պաթեղեան: Ս. Պատարազն
եւ Ս. Միարանութիւն և ժողովուրդ շարականի երգե-
ցողութեամբ բարձրացան Պատրիարքարան, ուր Սրբ-
րոց Թարգմանչաց երկրդ. Վարժարանէն փոքրիկ մը
սրտարուի ուղեւորով մը ուսանողութեան Ամանոսի
շնորհաւորները ներկայացուց Նորին Ամենապատ-
ուութեան՝ որ ապա օրհնելով բոլոր և փոխադար-
ձելով շնորհաւորութիւնները, մէկական նարինջ բաժ-
նեց ներկաներուն:

✱ Եր. 15 Յուն.— Ս. Բարսիլի հայրապետին: Ս.
Պատարազը մատուցուեցաւ ի Ս. Դիտադր: Ժամա-
րարն էր Հոգւ: Տ. Նարեկ Արդ. Մարֆաղէկեան: Ս.
Թ. Մանկապարտեղի աշակերտութիւնը Ս. Հաղորդու-
թիւն ստացաւ:

✱ Կիր. 16 Յուն.— Ս. Պատարազը մատուցուեցաւ
ի Ս. Յակոբ, Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր
Հոգւ: Տ. Սեան Արդ. Կարպետան: «Հայր մեր» էն
տաճ, Ամեն. Պատրիարք Ս. Հայրը իր Աթոռն խո-
սեցաւ, ողբերգելով յիշատակը վերջերս Ս. Էմիմանի
Մայր Աթոռին մէջ վախճանած Ս. Աթոռի վաստա-
կաւոր միարան Գերշ. Տ. Հայկազուն Արք. Արքահա-
մանի, ներբողը հիւստիով պատուական հոգեւորակա-
նին և ողբելով անոր մահը: Վեր առաւ հանդուցեալի
նկարագրին մէջ պարտաճանաչութեան և աւանդա-
պատուութեան գինը: Բարողէն ետք, Ն. Ամենապատ-
ուութիւնը նախագահեց հոգեւորական հանդիսաւոր
պաշտամունքին: Ս. Թ. Վարժարանի երկրորդական
բանին և Նախակրթարանի բովանդակ ուսանողու-
թիւնը Ս. Հաղորդութիւն ստացաւ:

✱ Դշ. 18 Յուն.— Ճրագալոյց Ս. Մննդեան: Ա-
ռաւորական ժամը 9:40ին, Ամեն. Պատրիարք Ս. Հօր
զխաւորութեամբ, Միարանութիւնը Մայրավանդի
աւագ դռնէն ինքնաշարժներու պատկառելի շարքով մը
ճամբայ ելաւ զէպի Սուրբ Մննդեան քաղաքը՝ Բեթ-
ղէնէմ: Շարքանքին ի վեր արեւոյ ջուրն ու մալլ
երկիւրը տեղի տուած էին պաշտաւ ու հանձնի արեւ-
դակի մը: Ճամբու կէսին Յունաց Ս. Եղիա վանքին
զիմաց, Թափօրը կանգ առաւ, ուր Բեթղէնէմի ու
ջրջակայից մուկթարները զիմաւորութեան եկած էին
նային Ամենապատուութեան: Աւանդական պատուա-
սիրութենէն և կարճ զաղարէ մը ետք Թափօրը շա-
րանակեց իր ճամբան, առանցողութեամբ միարան
ստեփաններու և ժամը 10:45ին հասաւ Ս. Մննդեան
հրապարակը, ուր խոնուած էին ուսանողութիւն և
ժողովուրդ: Նաանդային կառավարին ու Բեթղէնէ-
մի փոխ-քաղաքապետը (քաղաքապետը հիւանդութեան
պատճառաւ կը բացակայէր) բարի գալուստ մաղթե-
ցին Ամեն. Պատրիարք Ս. Հօր, որ զգեստաւորուելով
անցաւ Թափօրի դուռը: «Նորէն» ժամէն երկեցու-
ղութեամբ Տաճար մտնելէ ետք Թափօրը ուղղուեցաւ
զէպի մեր վանքը, որու տեսչարանին մէջ զիմաւորու-
թեան եկողները պատուասիրուեցան, մինչ զինուորա-

կան նուազագույնը մը Ս. Ծննդեան Հրապարակին վրայ կը նուազէր:

— Կէսօրէ կտք ժամը 2ին, Լուսարարայեան Գերշ. Տ. Հայրիկ Արք. Առաջնանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը Հարաւախառնով մուտք դործեց Ս. Ծննդեան Տաճար եւ ուղղուեցաւ դէպի Ս. Այլը, որտեալ խառն ետք, մեր բաժնին մէջ պաշտօնեան ճաշու եւ երկկոյնեան ժամերգութիւններ, եւ ապա ճրագալոյցի արարողութիւն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Այլին մէջ: Ժամաւարն էր Ս. Աթոռի միաբան եւ Գորտարայի Հոգեւոր Հովիւ Հոգշ. Տ. Տաթև Վրդ. Դարիկեան: Ապա Լուսարարայեան Սրբազան Հօր նախագահութեամբ կատարուեցաւ Ս. Ծննդեան նախատեան, որմէ ետք Հեղինակ մեծ շարականք եղև լով եւ անցնելով սխառագող դասին, մեր վանքի տեսչարանին ծօտ փակուեցան հանդիսութիւնները Ս. Ծննդեան Աւետարանին ընթերցմամբ եւ Փետք ի բարձունքի երգեցողութեամբ: Յետոյ բոլորը նստան աւանդական ճաշակոյցով:

— Գիշերուան ժամը 10ին, Տաճարի հայկական զանգերու խորհրդաւոր զօղանքէն ետք, Տաճարի մեր բաժնի մէջ սկսան գիշերալոյսն եւ ապա առաւօտեան ժամերգութիւնները:

* Դ. 19 Յուն.— ԾՆՈՒՆԻ Ե ԱՍՏՈՒԱՆԱՅԱՏՆՈՒԹԻՒՆ ՏԵԱՒՆ: Կէս գիշերին, Միաբանութիւնը իշաւ Ս. Ծննդեան այլը, ուր կատարուած արարողութիւնները, մէկ ժամուան տեսողութեամբ, ծաշնաւորուեցան խորալեկան ոտտիկայանքէն: Սոյն հանդիսութեան ներկայ էր Երուսաղէմի քաղաքապետը՝ Վսեմ. Թէոփ Բօլլէք եւ նախնադային կառավարչը՝ Վսեմ. Ռաֆայէլ Լէվի, ինչպէս նաեւ այլ պաշտօնական անձնաւորութիւններ: Ամեն. Պատրիարք Ս. Հայրը առաւ համայն Հայութեան ուղղուած իր պատգամը, որ կ'ըսէր Սիոնի ներկայ թիւով: Անկէ անդին հանդիսութիւնները շարունակուեցան մինչեւ առաւօտ, զոյգ պատարագներով մատուցմամբ եւ Հնորհնէքի հանդիսաւոր կատարմամբ: Առաջին պատարագը՝ Տաճարի մեր բաժնին մէջ մատուցեց Հոգշ. Տ. Աղան Վրդ. Պաթիգեան: Իսկ Հնորհնէքին նախագահեց եւ Ս. Ծննդեան այլին մէջ հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցեց տօնին աթիւ Գէլրոսին Հիւրարար ժամանած Գերշ. Տ. Գնէլ Եպս. Ճէրէնեան: Արարողութեանց աւարտին, նախող երկկոյնեան կարգով, Միաբանութիւնը բարձրացաւ Հայոց վանքը՝ ետխաճաշի:

Կարճ զաղարկ մը ետք, Թափօրը ճամբայ էլաւ դէպի Երուսաղէմ, ուր նստաւ ժամը 8-10ին եւ Հեղինակ մեծի երգեցողութեամբ բարձրացաւ. Պատրիարքարան, ուր Պատրիարք Ս. Հայրը Ս. Ծննդեան աւետիսով արձակեց բոլորը, մէկական նարինջ բաժնելով:

— Կէսօրէ կտք, Մայր Տաճարին մէջ պաշտօնած նախատեանին նախագահեց Գերշ. Տ. Նորայր Եպս. Պողոսեան:

* Ե. 20 Յուն.— Յիշատակ մեծեցոյց: Ըստ սովորութեան, Մայր Տաճարին մէջ պատարագեց Ազգ. Թաղաձանը՝ Հոգշ. Տ. Սիմեոն Արք. Միաբան: Ապա կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ նախագահութեամբ տօնին աթիւ Հիւրարար Ս. Աթոռ ժամանած Ռումանիոյ Ե. Պալիարիոյ Առաջնորդ եւ Ս. էջմիածնի միաբան Գերշ. Տ. Տէրայր Եպս. Մարտիկեանի:

Իսկ Երուսաղէմ, Ս. Ծննդեան ճրագալոյցի օրը, կէսօրէ կտք ժամը 1-30ին, Ս. Յարութեան Տաճարին մէջ կատարուեցան երկկոյնեան ժամերգութիւն եւ ճրագալոյցի արարողութիւն: Ս. Գերեզմանին վրայ պատարագեց Հոգշ. Տ. Գիսակ Արք. Մուգաւեան, իսկ նախատեանին նախագահեց Տաճարի Տեսուչ Հոգշ. Տ. Վաղարշ Վրդ. Խաչատուրեան:

Չորեքշաբթի առաւօտեան ժամը 4ին, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ առաւօտեան ժամերգութիւն, ապա Ս. Հրեշտակապետաց Տեսուչ Հոգշ. Տ. Նարեկ Արք. Մաթթաղէկեան պատարագեց

Ազգ. Սեղանին վրայ: Հնորհնէքի արարողաւ արարողութեան նախագահեց Գերշ. Տ. Նորայր Եպս. Պողոսեան:

Թէ՛ Երէկ եւ Թէ՛ այսօր, ի քաջակալութեան ժառանգաւոր սաներու, երգեցողութիւնները կատարուեցան տեղացի դպիւնէքու կողմէ:

* Ե. 22 Յուն.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Առաւօտեանին խորանին վրայ: Ժամաւարն էր Հոգշ. Տ. Սիմեոն Արք. Միաբան:

* Կ. 23 Յուն.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութեան, Ս. Լուսարարի երկկոյնին մէջ: Ժամաւարն էր Հոգշ. Տ. Նուրան Արք. Մանուկեան:

* Դ. 25 Յուն.— Առաւօտեանի յանդիսութեան ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Տէրայր Եպս. Մարտիկեան:

* Դ. 26 Յուն.— Տօն Անուամակոյնութեան Տեսուչ: Առաւօտեան ժամը 8-30ին, Գերշ. Տ. Տէրայր Եպս. Մարտիկեան գլխաւորութեամբ, Միաբան Հայրք. Հարաւախառնով մուտք դործեց Ս. Յարութեան Տաճար, ուր Գերշ. Հանդիսաւոր Սրբազանք մատուցեց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ եւ քաղաքի՝ Տէր, ուղղեալ զղեւացի մեր ի ճանապարհ աղգարութեան՝ ընարանով: Ս. Պատարագն ու բարոյք ճանապարհուեցան խորանին առաւօտեանին: Ս. Պատարագին ներկայ էր քաղաքի Ռումանական Եկեղեցւոյ Հոգշ. Հովիւ:

Վանք վերադարձին, Հայոց Բագի մուտքէն, լոյս ի լուսոյ՝ շաղկանի երգեցողութեամբ, Միաբանութիւնը յաւաքացաւ դէպի Մայրավանք ու բարձրացաւ Պատրիարքարանի մէջ զանչիմը, ուր Ամեն. Պատրիարք Ս. Հայրը զգեստաւորուած կը քաղաքի նախագահէր Հնորհնէքի արարողութեան: Կրօնականի մը շուրջ, պնակներու մէջ շարուած Ս. Աթոռի բարիքները օրհնուեցան, երգուեցան Ս. Ծննդեան եւ Միաբանութեան տօներու յատուկ շաղկապներ՝ իրեն փակուած Ծննդեան ութօրեայ հանդիսութեանց: Ապա, Բողոքողը մօտեցաւ ալը անելու եւ Ամենապատուութեան, ստանալով մէկական նարինջ: Ժամօրհնող Հոգշ. Տ. Յովսէփ Վրդ. Մամուրի գլխաւորութեամբ, Հնորհնէքի արարողութիւնը կրկնուեցաւ վանքի սեղանատան, խաչանոցին եւ ժառանգին մէջ: Օրհնուեցաւ նաեւ տօնին յատուկ հերիւսի աւանդական ճաշը, զոր Միաբանութեան հետ ճաշակեց նաեւ ստուարութիւ Բողոքողը:

— Յովհ. Կարապետի ծննդեան նախատեանին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարայեան Գերշ. Տ. Հայրիկ Արք. Առաւօտեան:

* Ե. 27 Յուն.— Տօն Ծննդեան Սրբոյն Յովնանու Կարապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Կարապետի խորանին վրայ, ուր կը գտնուի աշխարհմեր Կաթ Սեղանին: Ժամաւարն էր Հոգշ. Տ. Վրդ. Արք. Արաղեան:

* Ե. 29 Յուն.— Ս. Պետրոսի հայրապետին, Վլասայ եպիսկոպոսին եւ Արիստոփան տարկաւազին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղի: Ժամաւարն էր Հոգշ. Տ. Նարեկ Արք. Մաթթաղէկեան:

* Կ. 30 Յուն.— Իսրէկեկեան Առաջնորդի պահոյց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ: Ժամաւարն էր Հոգշ. Տ. Սեւան Արք. Դարիկեան:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Բ

* Կ. 2 Յուն.— Ամեն. Պատրիարք Ս. Հայրը, ընկերակցութեամբ Դիւանապետ Գերշ. Տ. Շահէ Եպս. Աճեմեանի, ներկայ գտնուեցաւ Թէլ-Ալիլի Թաղաքանին մէջ, Պաշտպանութեան նախարար Մօշէ Տալանի կողմէ արուած ընդունելութեան:

* Ե. 3 Յուն.— Օրթոդոքս Եկեղեցիի Ս. Ծննդեան տօնին աթիւ, Ամեն. Պատրիարք Ս. Հօր

դիտարարութեամբ, ամբողջ Միաբանութիւնը շնորհաւորութեան զնայց Յունաց Պատրիարքարան: Ապա, Դիւանապետ Գերշ. Տ. Ծաւէ Եպիսկոպոս, ընկերակցութեամբ Հոգեշնորհ Հայրերու, յոյն առիթով այցելեց Ասորիներու Եպիսկոպոսարան:

✱ Ծր. 15 Յուն.— Ս. Մննդեան տօնին առիթով, Պէրթիւթէն Ս. Աթոռ ժամանեց Գերշ. Տ. Գնէլ Եպս. Ճէրէճեան:

✱ Կիր. 16 Յուն.— Նոյն առիթով, Ռումանիոյ եւ Պուլկարիոյ Առաջնորդ Գերշ. Տ. Տիբայր Եպս. Մարտիկեան ժամանեց Ս. Աթոռ:

— Նոյն օրը Ս. Աթոռ հասաւ նաեւ Ս. Աթոռոյս Երիտասարդ ժիւրականներէն Գորտոպայի (Արժէնթին) Հայոց Հոգեւոր Հովիւ Հոգշ. Տ. Տաթև Վրդ. Ղաբիպեան:

Տօներէն ետք Գերշ. Սրբազանները մեկնեցան իրենց պաշտօնադնդները, Գերշ. Տ. Գնէլ Եպս. 26 Յունուարի Երեկոյեան, իսկ Տ. Տիբայր Սրբազան շա-

րաթ մը ետք:

✱ Եւ. 20 Յուն.— Մեր Ս. Մննդեան տօնին առիթով, առաւօտեան ժամը 9-30էն մինչեւ կէսօր, յաջորդաբար Պատրիարքարան այցելութեան եկան հետեւեալները. Յունաց Ամեն. Ս. Պատրիարքը, Հանդերձ Միաբանութեամբ, Ֆրանչիսկեանց Կիւթուր եւ Ասորիներու Եպիսկոպոսը, իրենց Միաբանութեան անդամներով, Անկիթան Արքեպիսկոպոսը եւ Արար Անկիթան Եպիսկոպոսը, Պապական Գերշ. Նուիրակը, Լուսերականներու եւ Արար Լուսերականներու Երէցները, Ռուսաց Եկեղեցիի եւ Հայ Կաթողիկոսներու ու Մարտիթի Համայնքի մեծաւորները, Տորմախոններու Վանահայրը եւ Ռումանական Եկեղեցիի Տեսուչը, ինչպէս նաեւ Քաղաքապետ Ն. Վեւի. Թէօֆ Բօլլէք եւ հիւրանշանակաւ կազմը ամբողջութեամբ:

✱ Ուր. 21 Յուն.— Կ. ա. ժամը 11ին, Լատինաց Ամեն. Ս. Պատրիարքը այցելեց Պատրիարքարան, շրջաւարտութեան համար:

ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ԵՕԹՆԵԱԿԸ

Քրիստոնէական Եկեղեցիներու կողմէ ընդունուած զեղեցիկ սովորութեան մը համաձայն, ամէն տարի, Յունուար 18-25, մասնաւոր աղօթքներ կը կատարուին Եկեղեցիներու Միութեան համար:

Այս տարի, Եկեղեցիներու Միութեան եօթնեակը Երկու Կիրակիներու միջև ամփոփելու համար, Յունուար 23-30ը նկատուած էր յարմարագոյն: Որոշուած էր նաեւ որ այդ շրջանին, բացի Ուրբաթ եւ Ծարաթ օրերէն, տարբեր դասանութեան պատկանող Եկեղեցիի մը մէջ կայանար Եկեղեցիներու Միութեան սրբազան նպատակին համար կատարուած աղօթաթողութիւններէն իւրաքանչիւրը:

Առաջին աղօթաթողութիւնը կայացաւ Կիրակի, 23 Յունուար, Երեկոյեան ժամը 6ին, Անկիթաններու Սէյնթ Ժօրճ Եկեղեցիին մէջ: Սոյն հաւաքոյթին ներկայ եղան, այլ յարանուանութեանց ներկայացուցիչներու կողքին, Հոգշ. Տ. Կիւրեղ Ծ. Վարդապետ, Հոգշ. Տ. Պարէտ Վարդապետ եւ Վիգէն եւ Խաթալ աւրեղաներ: Հայր Պարէտ հայերէն լեզուով Ս. Աւետարանէն ընթերցում կատարեց: Եպիսկոպոսական Եկեղեցիի Երէց Հայր Էլիւրի, անդիւրէն լեզուով խօսեցաւ Եկեղեցիներու Միութեան զաղափարին շուրջ:

Երկրորդ հաւաքոյթը կայացաւ յաջորդ օրը, Երկուշաբթի, 24 Յունուար, կէսօրէ ետք ժամը 4ին, քաղաքիս հրէական րաֆին մէջ գտնուող Հապէճներու Եկեղեցիին մէջ: Եթովպերէն լեզուով կատարուած աւարտողութեան աւարտին, Գերշ. Տ. Ապրա Եուսէֆ, Հապէճներու Եպիսկոպոսը, անդիւրէն լեզուով բոլոր պատմական եթովպական Միաբնակ Եկեղեցիին եւ խօսեցաւ Եկեղեցիներու Միութեան կարեւորութեան շուրջ:

Երեքշաբթի, 25 Յունուար, Երեկոյեան ժամը 5ին, Սին լեւան վրայ, Տորմախոններու Եկեղեցիին

մէջ կայացաւ երրորդ աղօթաթողութիւն: Ս. Աւետարանը կարդացուեցաւ զանազան լեզուներով:

Չորրորդը, 26 Յունուար, Չորեքշաբթի կէսօրէ ետք ժամը 4ին, կայացաւ Ս. Հրէշտակապետաց Եկեղեցիին մէջ: Ներկայ էին Անկիթան Գերշ. Արքեպիսկոպոսը եւ իր օգնականը՝ Քանոն Էլիւրի, Յոյն Կաթողիկոսներու Արքեպիսկոպոսը, Լուսերականներու եւ Արար Լուսերականներու Երէցները եւ այլ կրօնաւորներ՝ Ֆրանչիսկեան եւ Դոմինիկեան ժիւրանութիւններէ: Հանազան լեզուներով կատարուած Ս. Գրական ընթերցումներէ ետք, Հոգշ. Տ. Պարէտ Վրդ. Երէցեան անդիւրէն ճառով մը յայտնեց մեր Եկեղեցիի դժբախտ կեցուածքը Եկեղեցիներու Միութեան զաղափարին հանդէպ: Արարողութեան նախագահեց Գերշ. Տ. Ծաւէ Եպս. Աճէմեան: Մէջ ընդ մէջ ժառանգաւոր սաներ մեր շարականներու քաղցր մեղեդիները լսելի բրին տար հիւրերուն:

Հինգշաբթի, 27 Յունուար, Երեկոյեան ժամը 5ին, Լուսերականներու Եկեղեցիին մէջ կայացած աղօթաթողութիւն, Հոգշ. Տ. Բակուր Արեղայի կողմէ կատարուած Աւետարանական ընթերցումէն ետք, Հոգշ. Տ. Մուշեղ Արեղայ իր աղու ձայնով մեներգեց «Ուրախ լըր սուրբ Եկեղեցի» շարականը, որուն երգեհոնի վրայ կ'ընկերանար Պր. Սահակ Գալայճեան:

Եզրափակիչ հանդիսութիւնը կայացաւ Կիրակի, 30 Յունուար, կէսօրէ առաջ ժամը 11ին, Ֆրանչիսկեաններու վանքի Եկեղեցիին մէջ: Բխոյանդական ծէսով Ս. Պատարազ մատոյց եւ քարոզեց Յոյն Կաթողիկ Եպիսկոպոս Գերշ. Տ. Հիւրիոն Քապուճի, յայտնելով թէ փոխադարձ սիրոյ եւ իրարահասկացողութեան ոգիով միայն կրնայ կամքջուել բրիտանական աշխատանք Եկեղեցիներու միջև գոյութիւն ունեցող խրատաւոր: